




ՍՐԲԱԳՐՈՒՄՆԵՐ ՀԱՅ ՀԻՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

(Հայագետ Գ. Տեր-Մկրտչյանի հետազոտական փորձից)

1

Հին ու միջնադարյան հայոց մատենագրության բոլոր հուշարձաններն անխտիր, նաև նոր ժամանակների շատ ու շատ գրական ստեղծագործություններ սերունդներին են փոխանցվել ձեռագիր արտագրությունների միջոցով: Վաղնջական դարերում Հայաստանում կային գրչության հատուկ կենտրոններ և գրքերը կամ մատյանները տպագրության պատրաստող, այն է՝ բազմացնող, հատուկ անձինք՝ գրիչներ: Վերջին հարյուրամյակներում նրանց փոխարինելու են գալիս արտագրողներն ու գրասերները, որոնք որոշակի վարձատրությամբ կամ անձնական հետաքրքրասիրությունից դրդված արտագրում, վերանորոգում ու բազմացնում էին հին ձեռագրերը, անտիպ ու արգելված ստեղծագործությունները և այդ ձևով փրկում դրանք անխուսափելի կորստից:

Բայց Գրիչների ու արտագրողների գրագիտության մակարդակը, նաև մասնագիտական պատրաստությունը միշտ չէ, որ բավարար էր. կային հմուտներ և իրենց գործի իսկական վարպետներ, բայց քիչ չէին նաև գրասեր թերուսներն ու անուղղելի տգետները, հետևաբար՝ գրքի կամ մատյանի նվիրյալ լինելը դեռ ցանկալի նախապայման չէր արտագրվող, երբեմն եզակի, բնագրի հարազատ ընդօրինակման ու անխաթախ տարածման համար:

Մասնագետ բանասերներն ևս, որքան էլ լավատեղյակ՝ սկզբնաղբյուրներին, և ուշադիր՝ հղումներ ու մեջբերումներ կատարելիս, երբ հետազոտական աշխատանքի ավարտից հետո սկսում են գրածը կամ արտագրածը վերջին անգամ, տպագրության հանձնելուց առաջ, ուշադիր ընթերցել, համարյա միշտ նկատում են մոռացված կամ ո՛չ ճիշտ վերծանված, մեկ-մեկ էլ՝ անհարկի տեղաշարժված բառեր ու տառեր, անգամ բառակապակցություններ, երբեմն էլ ելուզակի նման գլուխ բարձրացնող կոպիտ տառաւխալներ, որ դժվարանում են բացատրել, թե ի՛նչպես են թափանցել մաքուր արտագրված աշխատության մեջ:

Այսպիսի փորձություններն ուղեկցել են բոլոր գրիչներին ու արտագրողներին բոլոր դարերում: Հմուտները, հարկավ, ինչ-որ ձևով վերջում ջանացել են շտկել վիճակը և կրկին ու կրկին համեմատելով արտագրածը՝ օտարել են թույլ տված կամ սպրդած սխալների մեծ մասը: Ինքնափրահարվածներն, ընդհակառակը, իսկական չարիք են դարձել հին ու միջ-

նադարյան հեղինակների ստեղծագործությունների և դասական բնագրերի համար: Այսպիսով, շարունակաբար արտագրվելով՝ գրական հուշարձանները մի կողմից փրկվել են կորստից, բայց և միաժամանակ ենթարկվել անխուսափելի աղավաղումների:

Հայ բանասիրության, մասնավորապես բնագրագիտության մշտական հոգացումն է եղել վերականգնել գրական-պատմական բնագրերի և դասական գրողների ստեղծագործությունների աղավաղումներից զերծ բնագրերը, առանց որի աներևակայելի է իսկական առումով գիտական-հետազոտական աշխատանք: Անցյալի հայագետներից շատերն են շահեկան փորձեր արել տվյալ բնագավառում, բայց մեր խոսքն այժմ հրանցից մեկի վաստակի մասին է, որի հետազոտությունների շնորհիվ բացահայտվել են մատենագրական կարևոր հուշարձանների մեջ, դարերի ընթացքում, աննկատելիորեն սպրդած աղավաղումների բլուն պատճառները, մեկնաբանվել անհասկանալի դարձած ու մութ մնացած շատ բաների ու արտահայտությունների իրական նշանակությունը, սրբագրվել ու օտարվել բազմաթիվ սխալներ՝ նոր իմաստ ու հնչեղություն հաղորդելով հին բնագրերին և դյուրացնելով վերջիններիս մեջ ամփոփված կարկրագույն տեղեկությունների օգտագործումը:

Հնարավորություն չունենալով լայնորեն ծավալվելու՝ ստորև կանդրադառնանք այդ հայագետի սրբագրումներից ու գյուտերից միայն երեքին, որոնց շնորհիվ ճիշտ որ նոր իմաստ ու բովանդակություն են ստանում մատենագրական հուշարձանների մթագնած, սակայն կարևորագույն դրվագները:

2

Մովսես Խորենացու Հայոց պատմության եզրափակիչ ենթագլխի՝ Ողբի մեջ, 5-րդ դարի հայ շինական-ռամիկների մասին կան այսպիսի խոսքեր. **«Ժողովրդականք վեսք, ստահակք, մեծախօսք, անվաստակք, արբեցողք, վնասակարք, փախչողք ի ժառանգութենէ...»**: Այլ ձեռագրերի մեջ էլ **արբեցողք**-ի փոխարեն հանդիպում է **այրեցողք** ընթերցվածը: Ուսումնասիրողներից ոմանք առաջնությունը տալով **այրեցողք** ընթերցվածին և այն մոծելով Խորենացու Հայոց պատմության՝ իրենց հրատարակած բնագրերի մեջ, սահել-անցել են հեղինակի բլուն ասելիքի վրայով, իսկ **այրեցողք** բառն էլ բացատրել իբր՝ **ծաղրող, ծաղր ու ծանակ սիրող** (Մ. Էմին), **կրսկըծեցնող** (Խորեն Ստեփանե) անձ, ավելի քան մթագնելով Խորենացու գրածը:

Հանգամանորեն հետազոտելով Մովսես Խորենացու Պատմության բնագրի այս հատվածը և Միջնադարյան Հայաստանի սոցիալական հարաբերություններն արտացոլող իրավաբանական ու այլ կարգի հուշարձաններ, Գ. Տեր-Մկրտչյանը հանգել է մի անշեղ եզրակացության, որ նախնականը կամ բնագրայինը **այրեցողք** ընթերցվածն է, և այն պիտի դիտվի որպես գրական արձագանք նույն ժամանակներում լայնորեն տարածված դասակարգային պայքարի ձևերից մեկի, երբ ռամիկ-գեղջուկներն անկարող լինելով թույլատրելի ճանապարհներով արդարության ու ազատության հասնել՝ իրենց վրեժն ավատատիրոջից առնում էին նրա տունը, արտը, դեզը, մարագը կամ ամբարը այրելով և գաղտնի փախչելով այլ նախարարների հողեր: Այստեղից էլ՝ **այրեցողք, վնասակարք և փախչողք ի ժառանգութենէ**

տարողունակ խոսքերը սոցիալական տվյալ «չարիքի» մասին, որի առաջն ստեղծող համար Կանոնագրքերում և Հայոց դատաստանագրքում հատուկ պատժական հոդվածներ են սահմանվում: «Վնասակարացն և այրեցողացն, որ գտնուա այրեն և կամ զայլ ինչ նիւթ՝ է ամ (յոթ տարի—Պ. Հ.) ապաշխարեացեն»,— գրված է Եպիփան Կիպրացու Կանոններում, որոնք, թվում է, աչքի առաջ ունեն Մովսես Խորենացին, մինչ փորձում էր բնութագրել իր օրերի հայ շինականներին՝ Ողբի մեջ ևս նույն «այրեցողք», «վնասակարք» բառերը գործածելով (մանրամասնությունները տե՛ս Միաբանի (Գ. Տեր-Մկրտչյան) «Հայկականք, Ա—ԺԲ» աշխատության Ա հատվածում, նախապես տպագրված՝ «Արարատ», 1894, № 1):

Այսպիսով՝ հայագետի ուղղման շնորհիվ ո՛չ միայն ճշգրտվում է մատենագրական բնագիրը, ո՛չ միայն ընկալելի են դառնում հին Հայաստանի դասակարգերից մեկի բարոյական արատները, այլև հնարավորություն ենք ստանում թափանցելու երկրի ներքին կյանքի ու դասակարգային պայքարի ոլորտների մեջ:

Բանասիրական այս գյուտից մեկ տասնամյակ անց, հրատարակության պատրաստելով Մովսես Խորենացու Հայոց պատմության քննական բնագիրը (այն լույս տեսավ 1913-ին), Մ. Աբեղյանն, սկզբներում, դեռ երկընտրանքի մեջ էր և նախապատվությունն ո՛չ այդ, այլ «արբեցողք» ընթերցվածին էր տալիս, ուստի վերջինն էլ թողնում է Ողբի բնագրում. «Ժողովրդականք վէսք, ստահակք, մեծախօսք, անվաստակք, **արբեցողք**, վնասակարք...» և այլն: Բայց Հայոց պատմության տպագրությունն ավարտվելուց անմիջապես հետո, երբ վերջին անգամ ընթերցում է պատրաստի էջերը՝ վրիպակների ցանկը կազմելու համար, զգում է, որ ինքն արդարացի չէ, և ճշմարտացին Գ. Տեր-Մկրտչյանի առաջարկած ուղղումն է: Եվ որովհետև գիրքը պատրաստ էր, իսկ տպագրված մամուլների մեջ այլևս անկարելի էր նոր ուղղումներ անել, հենց վրիպակների ցանկում առաջարկում է ընթերցողներին՝ **արբեցողք** բառի փոխարեն բնագրի մեջ հավելել **այրեցողք**-ը: Աբեղյանի կամքը կատարվում է. վրիպակների ցանկում այդ ուղղումն իսկապես առկա է:

Դրանից հետո, սակայն, փոխանակ Ողբի բնագիրը գեթ այդ սխալից զերծ պահելու, Խորենացու Պատմության մերօրյա հայ և ռուս թարգմանիչների «աջակցությամբ» պարտադրվում է վերադառնալու ավանդական սխալին, որն, ինչ խոսք, բնավ արդարացված չէ և հետևանք է անուշադրության:

Ստեփանոս Մալխասյանցն, օրինակ, որը «Պատմագիրք Հայոց» մատենաշարի գլխավոր խմբագիրն էր, և նրա հսկողությամբ ու հիշյալ մատենաշարով է լույս տեսել Մովսես Խորենացու Հայոց պատմության՝ Մ. Աբեղյանի և Սեթ Հարությունյանի պատրաստած քննական բնագիրը, ըստ որում՝ վերջիններս ձեռագիրն ուղարկում էին Էջմիածնից, իսկ Մալխասյանցը, որ ապրում ու աշխատում էր Թիֆլիսում, քննում, ստուգում էր այն ու հանձնում տպարանում շարելու, իսկ այնուհետև՝ նաև սրբագրում, ու ամեն անգամ, որևէ փոփոխության հարց ծագելիս, նամակով բանակցում էր Աբեղյանի հետ: Երբ անհրաժեշտություն էր զգացվում որևէ բառ կամ ընթերցված, անգամ կետադրական նշան փոփոխելու կամ ավելացնելու, անպայման գրում ու ստանում էր Աբեղյանի գրավոր համաձայնությունը: Նշանակում է՝ **այրեցողք** ընթերցվածի մոծումը բնագրի մեջ կամ համապատաս-

խան ուղղումն արվել է հանգամանակից քննությունից և երկու հայագետների փոխադարձ համաձայնությունից հետո:

Ավելի ուշ, 30-ական թթ. վերջերին, նույն Մալխասյանցը ձեռնարկելով Խորենացու Պատմության աշխարհաբար թարգմանությունը (Երևան, 1940)՝ փոխանակ նախապես քննական հրատարակության վրիպակների ցուցակն աչքի անցկացնելու և սպրդած սխալներն ու աղավաղումներն ուշի-ուշով վերացնելու, իսկ պահպանելու դեպքում էլ ծանոթագրությունների մեջ դրանց անհրաժեշտությունը հիմնավորելու, Ողբի համապատասխան մասում թողել է ավանդական ձևը՝ **արբեցողք** ընթերցվածը, հաշվի չառնելով, որ նույն Ողբում, մի քանի տող ներքև, Մովսես Խորենացին «արբեցող» հասկացությունն արտահայտել է **«գինեխումբ»** բառով: Պիտի ցավել, որ գիտնականն ուշադիր չի եղել և իր կամքից անկախ մոլորության մեջ է գցում ժամանակակից ընթերցողներին, որոնցից շատերը չեն էլ մտածում գրաբար բնագրին դիմել կամ գիրքը կարդալուց առաջ վրիպակներն ուղղել:

Ողբի հիշյալ հատվածը չի թուղել նաև Պատմության ուսերեն վերջին թարգմանիչը՝ ակադ. Գ. Սարգսյանը, և **արբեցողքը** թարգմանել *бразники* (կերուխում սիրող, խրախճանքի սիրահար, քեֆչի), իսկ արտահայտությունը փոքր-ինչ սեղմելով՝ հանգեցրել հետևյալին. „Простолюдины дерзкие непокорные, бразники. вредоносные, бегущие от наследственного (надела)“ (Мовсес Хоренаци, История Армении, перевод Г. Саркисяна, Е., 1990, с. 314):

Այս դեպքում ևս արդարությունը պահանջում էր Ողբի հատվածը սրբագրել ըստ քննական բնագրի և փոխադրել ամբողջությամբ, հակառակ պարագայում՝ Գ. Տեր-Մկրտչյանի առաջարկած և Աբեղյանի ընդունած ուղղումը մերժելու դեպքում, եթե դրա համար բավարար հիմքեր կային, պատշաճ բացատրություններ տրվեին ծանոթագրությունների մեջ: Բայց նման բան ուսերեն նոր թարգմանության մեջ նույնպես չկա: Գեթ այսուհետև անհրաժեշտ է Խորենացու Հայոց պատմության միջից անվերապահորեն օտարել հիշյալ անճշտությունը:

3

Գ. Տեր-Մկրտչյանի երկրորդ խուզարար ուղղումը կապված է հայոց ոսկեդարյան մատենագրության թարգմանական հուշարձաններից մեկի հետ, որի ամբողջական կառույցը վաղուց փլուզված էր. հայագետի տևական որոնումների ու տքնության շնորհիվ է, որ այսօր վերականգնված է այն՝ խճանկար հիշեցնող պատկերի նման բեկոր առ բեկոր հավաքվելով ու ամբողջացվելով: Մեր խոսքը Աբրահամ Խոստովանողի՝ 5-րդ դարի 60-ական թվականներին ասորերենից թարգմանած «Վկայք Արևելից» վարքագրական ժողովածուի մասին է, հայոց բանաստեղծական լեզվի այդ աննախադեպ ու շքեղ արտահայտության, որի ընդարձակ ներածության մեջ նկարագրված են 4-րդ դարում քրիստոնյաների նկատմամբ պարսից Ծապուհ թագավորի գործադրած բռնություններն ու դաժան հալածանքները, և ուր մատյանի հեղինակը՝ Մարութա Նփրրկերտցին, հարևանցիորեն վիպում է նաև հայ ժողովրդի կրած անլուր տառապանքները. **«Որդիք Հայոց վշտատեսաց կոխան փղաց և երիվարաց լինելին...»**: Բայց, դժբախտաբար, այս արտահայտությունը հայ գետնի վրա դարերի ընթացքում աղավաղվելով՝ փոխանց-

վել էր սերունդներին ու հրատարակել մի կերպարանքով, որտեղից հայ անունն սումիշտ արտաքսված էր. **«Որդիք հարց վշտատեսաց...»** և այլն (**«Սուփերք»**, գ. Ի, էջ 94): Հետևանքները դժվար չէ պատկերացնել. մթագր-նել էր հայոց պատմությանը վերաբերող այդ կարևորագույն սկզբնաղբյուրը, քանի որ **«որդիք հարց»**, այսինքն՝ հայրերի գավակներ բառակապակցու-թյունը արդեն ոչինչ չստող խոսք էր դառնում:

«Վկայք Արևելիցի» ներածության առաջին հրատարակողը նույնպես, որը Ղևոնդ Ալիշանն է՝ խորիմաց, բազմափորձ ու քաջատեղյակ աղբյուրա-գետ-հայագետը, նա ևս իր հմտությամբ հանդերձ չի ենթադրել կամ կոա-հել, որ տվյալ դեպքում գործ ունի աղավաղված արտահայտության հետ, և բնագիրն այդ տարագրով էլ դրել է գիտական շրջանառության մեջ: Այս էլ ասենք, որ հուշարձանի ասորերեն բնագիրն ևս այն օրերին ծանոթ չէր հա-յագետ-բանասերներին, որպեսզի պատշաճ համեմատություններ կատարե-լով կարողանային այդ և ուրիշ շատ աղավաղումներ երևան բերել: Այս-պես շարունակվեց մինչև անցյալ դարի 90-ական թթ. սկզբները, մինչև որ հարցի քննությամբ սկսեց զբաղվել նույնչափ մեծ հայագետ Գ. Տեր-Մկրտչյանը:

Համբերությամբ հավաքելով **«Վկայք Արևելիցի»** հուշարձանի բեկորները, ավելի ճիշտ՝ նրանց ուշ դարերի արտագրությունները, և ուշադրությամբ բաղդատելով միմյանց հետ, մասնավորապես Էջմիածնի մատենադարանում պահվող հնագույն Ճառընտիրներում եղած հատվածների հետ և վերջիննե-րին տալով գերապատվությունը, որպես առավել հին ու ընտիր բնագրից արտագրվածներ, Գ. Տեր-Մկրտչյանը նկատում է, որ խնդրո առարկա ար-տահայտությունն սկզբնապես այլ տեսք է ունեցել. **«Որդիք հարց (իմա՛ Հա-յոց—Պ. Հ.) վշտատեսաց կոխան փղաց և երիվարաց լինէին...»**, իսկ այնու-հետև պարզում, որ տակավին 5-րդ դարում այդ դրվագը գրավել է Փավս-տոս Բուզանդի կամ Բուզանդարան պատմութեանց երկի խմբագրի ուշա-դրությունը, և փոքր-ինչ փոփոխելով՝ այդ պատմական երկասիրության մեջ է ներմուծել Մարութաս Նփրրկերտցու խոսքերը, գուցե և հենց Աբրահամ Խոստովանողի թարգմանությունից. **«Հրաման տայր թագաւորն Պարսից Շապուհ զամենայն այր ի չափ հասեալ կոխան արարեալ փղաց...»** և այլն (**Փավստոս, Դ, 55, ընդգծումը մերն է—Պ. Հ.**):

Ինչպես բացատրում է հայագետը, հին ու ընտիր շատ ձեռագրերում **Ա. և Ո** հնչյուններից (գրերից) հետո չի գրվել կիսաձայն **Յ-ն**, որի պատ-ճառով համապատասխան բնագրերի հետագա արտագրողները նման բա-ռերը շատ հաճախ ճիշտ չհասկանալով՝ սխալ են վերարտադրել կամ սրբ-բագրել, ինչպես վերևում մեջբերված արտահայտության մեջ **ՀԱՈՅ-ՀԱՅՈՅ** բառը և այն դարձրել **ՀԱՐՅ**:

Աղբյուրագիտական հանգամանալից քննությունից հետո ուղղելով բնա-գրային սույն աղավաղումը և այդ մասին տեղեկացնելով գիտական հասա-րակայնությանը (**«Ագաթանգեղոսի աղբյուրներից»** աշխատության մեջ, 1896-ին), Գ. Տեր-Մկրտչյանը վերականգնել ու ճշտել է **«Վկայք Արևելիցի»** խիստ կարևոր դրվագներից մեկի իրական նշանակությունը, նոր ապացույց-ներ տրամադրել Փավստոս Բուզանդի Պատմության վավերականության մա-սին և նորից նոր հայտնագործել հայոց մասին վկայող մի արտաքին աղ-բյուր՝ հորինված 4-րդ դարում և թարգմանված 5-րդ դ. 60-ական թթ., որը խոր հետք է թողել հայոց հին մատենագրության վրա և որից առատորեն

օգտվել են (և՛ ոճի, և՛ լեզվական ատաղձի բնագավառում) Կորյունի, Եղիշեի, Ղազար Փարպեցու, Ագաթանգեղոսի հեղինակներն ու խմբագիրները:

Այս էլ ասենք, որ չնայած Մարութաա Նփըրկերտցու մատյանի ասորերեն բնագրի մի քանի ուրիշ, մասն մեր ուշադրությունը գրաված հատվածը չի պահպանվել կամ գտնված չէ առ այսօր, բայց Գ. Տեր-Մկրտչյանի ուղղումը ոչ միայն ընդունելի, այլև, ըստ ամենայնի, ճշգրիտ են համարում հուշարձանի մերօրյա հետազոտողները:

Զմոռանալով, ըստ այդմ, իր վերապահությունն անել, առաջիններից մեկը, հօգուտ Գ. Տեր-Մկրտչյանի ուղղման, արտահայտվել է Վիեննայի Մխիթարյան միաբանության երբեմնի հեղինակավոր անդամ, բազմափորձ բանասեր Արիս Վարդանյանը: Տակավին 1912-ին ստացած լիցենզիայի հայագետից ժողովածուի բնագրերի մասը և հանգամանորեն քննելով այն, արդեն գրքի հրատարակությունից անմիջապես հետո, սակայն առանց այն ձեռքի տակ ունենալու (լույս է տեսել Գ. Տեր-Մկրտչյանի մահվանից հետո, 1921-ին) և վերջինից անկախ հրատարակած իր նկատողություններում, նա «Որդիք Հայոց» ընթերցվածը համարել է **հաջող ընտրություն**, իսկ անձամբ Գ. Տեր-Մկրտչյանին՝ նման խնդիրներում հմուտ անձ. «Գ. Տեր-Մկրտչյանի շատ հաջող ընտրություններն մին է, անտարակույս, մասն «Սոփերքի» ընծայած (էջ 94) «Որդիք **հարց** վշտատեսաց կոխան փղաց և երիվարաց լինելին» ընթերցվածին փոխարեն «Որդիք **Հայոց**» ընթերցվածը (էջ 43), որ հիմնված է A և B օրինակներու տված տարբերակին վրա. դժբախտաբար, պակասավոր է այստեղ ասորի բնագիրը, որով չենք կրնար վրճահանորեն հաստատել «Հայոց» տարբերակին հարազատությունը»,—գրել է նա, ավելացնելով նաև, թե «Զեռագրական տարբերություններու մեջ ընտրություն ընել հարազատին և ո՛չ հարազատին միջև դժվարին գործ է», մանավանդ, երբ չկա վստահելի ուղղիչ մը», բայց «Գ. Տեր-Մկրտչյան բավական հաջող է այս նյութիս մեջ» (Հանդես ամսօրյա, 1922, № 4—5, էջ 273): Հիմնավոր խոսքը, սակայն, պատկանում է բանասեր-ասորագետ Լ. Տեր-Պետրոսյանին:

Բնագրագիտական մանրագնին քննության առնելով «Վկայք Արևելիցի» ներածությունը և մասնավորապես վերջինիս խնդրո առարկա դրվագը կամ պարբերությունն ըստ բովանդակության և ոճաբանական հատկանիշների՝ հայագետն անվերապահորեն եզրակացնում է, որ «**Նախասկզբնական պետք է համարել «Որդիք Հայոց» ընթերցվածքը**», մանավանդ որ «այն լիովին ներդաշնակում է տվյալ հատվածի բովանդակությանը», ըստ որում՝ բացառվում է հատվածը թարգմանչի ընդմիջարկություն համարելու ենթադրությունը նույնպես, որովհետև «**ներածության ամենահարազատ և բնութագրական մասերից է**», հետևաբար և հարկ չկա բնավ երկբայելու, որ «Որդիք Հայոց...» և այլն հատվածը «**Գալիս է «Վկայք Արևելից» ժողովածուի ասորական սկզբնագրից**»: Նշանակում է նաև, որ «Վկայք Արևելիցի» տվյալ դրվագն իսկապես «միակ արտաքին աղբյուրն է, որ հաստատում է հայ պատմիչների հաղորդումները IV դարի 60-ական թվականներին պարսիկների կողմից Հայաստանում գրադաշտականություն մտցնելու փորձի մասին» (Լ. Տեր-Պետրոսյան, Աբրահամ Խոստովանողի «Վկայք Արևելիցը», Ե., 1976, էջ 107—108):

4

Նույնպիսի խոր հմտությամբ Գ. Տեր-Մկրտչյանն սրբագրել է Մովսես Խորենացու Հայոց պատմության Երկրորդ գրքի ԿԳ գլխի մի աղավաղ արտահայտություն՝ Բագրատունյաց նախարարական տոհմում գործածական դարձած անձնանունների մասին: Անդրադառնալով հայ իրականության մեջ երեխաներին անվանակոչելիս Բագրատունի իշխանների ավանդական դարձած սովորույթներից մեկին, պատմահայրը մասնավորապես նկատում է, «...զի թողոյ ազգին Բագրատունեաց զՕրէնս հարցն՝ (այսինքն՝ հրեա նախնիների—Պ. Հ.) նախ խժական ժառանգեցին յորջորջումն՝ Բիւրատ և Սըբատ և այլ այսպիսի կոչմունս, զրկեալ ի նախնական անուանց» և այլն:

Հանգամանորեն քննելով Մովսես Խորենացու Պատմության այս հատվածը՝ Գ. Տեր-Մկրտչյանը նկատում է, որ **Սմբատ** անձնանվան առկայությունը վկայակոչված արտահայտության մեջ կա՛մ հետևանք է բնագրային աղավաղման, կա՛մ տվյալ խնդրում անարդարացի է պատմիչը, որովհետև գոնե Սմբատը հրեական անուն է և ո՛չ խժական: Որովհետև Խորենացին հազիվ թե թույլ տար այդպիսի սխալ, գիտնականն ենթադրում է, որ նրա Հայոց պատմության Բ գրքի ԿԳ գլխի խնդրո առարկա արտահայտության մեջ սկզբնապես պետք է գրված լինեին այլ անձնանուն, հարկավ, խժական, այն է՝ հեթանոսական-պարսկական, ինչպես, ասենք, **Տրդատ**, մասնավորապես որ Հայոց պատմության նույն գլխի նախորդ պարբերություններում Մովսես Խորենացին պատմում է հենց խժական Տրդատ անունը կրող մի Բագրատունու խորշելի ու մերժելի վարք ու բարքի մասին:

Ծուտով առիթ ունենալով բաղդատելու միմյանց հետ Մովսես Խորենացու Հայոց պատմության՝ իրեն մատչելի մի շարք ձեռագրեր, մասնավորապես Ներսես Գրչի արտագրած ընտիր օրինակում Գ. Տեր-Մկրտչյանը հանդիպում է նիշտ և նիշտ Տրդատ անվանը: Արդարանում է նրա առաջադրած վարկածը, և ձեռք բերած արդյունքների մասին ծանուցվում է գիտական հասարակայնությանը «Արարատ» ամսագրում շարունակաբար տպագրության հանձնվող «Ուսումնասիրություն Խորենացու Պատմության» հոդվածաշարի Ե գլխում:

Գ. Տեր-Մկրտչյանի այս ուղղումն ևս, երկար տարակուսանքներից հետո, ինչպես այդ տեղի է ունեցել Ողբի հատվածի հետ, ընդունել է Մ. Արեղյանը և համապատասխան հիշեցում արել Հայոց պատմության ապագա ընթերցողներին, բայց նորից քննական բնագրի վրիպակների ցանկում. «Էջ և տող՝ 196, 5 բն., տպված է՝ Սմբատ, պետք է լինի՝ Տրդատ»:

Ստեփանոս Մալխասյանցն իր աշխարհաբար թարգմանությունը կատարելիս՝ այս անգամ ուշադիր է գտնվել և **Սմբատ** անունն անվերապահորեն ջնջելով փոխարինել է **Տրդատ**-ով. Բագրատունյաց ցեղի մարդիկ, իրենց հայրենի կրոնը թողնելիս՝ սկզբում օտարտոտի անուններ սկսեցին կրել, ինչպես Բյուրատ, Տրդատ և այլ այսպիսի անուններ»,—միաժամանակ այդ մասին հիշելով ծանոթագրություններում. «Այս ուղղումն առաջին անգամ առաջարկել է Միաբանը իր ուսումնասիրության մեջ, էջ 48» (տե՛ս թարգմ. 1940 թ. հրատ., էջ 302, ծան. 193):

Մովսես Խորենացու Հայոց պատմության ոտներեն նոր թարգմանության աշխատասիրողն, ընդհակառակը, դարձյալ մոռացել է բաժնաշխատ հայագետների կամքն ու հիշեցումը և հատվածը փոխադրել ավանդական սխալով. «Когда род Багратуни покинул веру своих предков, он

прежде всего приобрел варварские призвания—Бюрат, Смбат и тому подобные наименования".— ծանոթագրությունների մեջ ևս որևէ բացատրություն չտալով, թե ինչո՞ւ այդ կերպ է վարվել, չնայած թարգմանության ներածության մեջ հավաստված է, որ այն «կատարված է... Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի պատրաստած քննական բնագրից» և «շեղումներն... ամեն անգամ կպատճառաբանվեն ծանոթագրություններում» (տե՛ս վկայակոչված հրատ., էջ XLVII):

Չենք ուզում մանրանալ, բայց պահանջվող ուղղումը լռելյայն թելադրում էր նաև Հայոց պատմության տվյալ գլխի խորագիրը՝ «Յաղագս Տըր-դատայ Բագրատունոյ եւ անուանց ազգի նորա առաջնոց»: Մովսես Խորենացին չէր կարող երկու մասի բաժանելով ու միմյանց հակադրելով՝ թվարկել Բագրատունյաց տոհմի հին ու նոր անունները և երկու դեպքում էլ մատնանշել նույն **Սմբատ** անունը կամ նրա երբայական ենթադրյալ ձևերը՝ **Սափատիա** և **Շամբատ**, իսկ **Տրդատ**-ը անտեսել կամ մոռանալ: Վերջապես՝ պատմահայրն ինչքան էլ անուշադիր գտնվեր, աներևակայելի է, որ 6—7 տողանոց պարբերության մեջ սկզբնական մասում հավաստածը վերջում մերժեր, ինքն իրեն բացահայտորեն հակասեր, մանավանդ որ Պատմության առաջին գրքի ԻԲ գլխում ևս, դիմելով իր մեկենաս Սահակ Բագրատունուն, պարզ ու որոշ ասել էր. «Բայց ծանի՛ր, զի Սմբատդ անուն, զոր յանախ Բագրատունիք ի վերայ պատանեաց կոչեն՝ ճշմարտութեամբ Շամբաթ է, ըստ նախնի իրեանց խօսիցն, որ է երբայեցի»:

Մովսես Խորենացին արթուն ու զգաստ միտք էր և ո՛չ անպատասխանատու, անուշադիր անձ, որ շատերը պիտի ենթադրեն, եթե Պատմության բնագիրը շարունակենք թողնել անպատասխանատու գրիչների թույլ տված այս ու նման կարգի սխալներով, թեպետև Պատմության Խառը խմբի գրչագրերի արտագրողները, ինչպես Ներսես գրիչը և ուրիշներ, բնագիրը վերաբնակարարել են հարազատորեն. «...խժականն ժառանգեցին յորջորջումն՝ Բիրատ, Տրդատ» և այլն, որ նույնպես չէր կարելի անտեսել:

Անձայն հաշտվելով աղավաղման հետ, թարգմանիչն ընդհանուր ձևով պատճառաբանում է, թե Մովսես Խորենացու թվարկած անունների հայկական ու հրեական զուգահեռ ձևերն իբր «իրականում ...տարբեր ծագում ունեն» (ծան. 454): Ժամանակին Գ. Տեր-Մկրտչյանը նույնպես նկատել է այդ, բայց և զգուշացրել դրանից շտապ եզրակացություններ չանել. «Խորենացուց իրավունք չունենք պահանջելու, որ նա այդ ստուգաբանությունները կատարեր այժմյան բանասիրության (լեզվաբանության) ցույց տված օրենքների համաձայն» («Խորենացու Պատմության ուսումնասիրություն», էջ 48):

5

Եվս երկու խոսք. այս ապրիլի 21-ին (Հին տոմարով՝ 9-ին) լրանում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան, մեծ հայագետ, դպիր Գալուստ Տեր-Մկրտչյանի ծննդյան 135 տարին: Ժամանակակիցներն անվերապահորեն ընդունում էին նրա մեծ հեղինակությունն ու վաստակը հայ հին ու միջնադարյան գրականության և եկեղեցական մատենագրության հետազոտության բնագավառում, հատկապես այն ներդրումները, որ գիտնականը կատարել էր Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու, Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Անանիա Շիրակացու, Անանիա Մոկացու, Անանիա Նարեկացու

և շատ ուրիշների կյանքի ու գրական ժառանգության ուսումնասիրության ու հրատարակման, հայոց վարքագրության ու վկայաբանության, հայոց իմաստասիրական մտքի ու առակագրության անձանոթ էջերի հայտնագործման ու լույս աշխարհ հանելու և, ընդհանրապես, հայ մատենագրության ստեղծվածների հանգամանակից քննության ու լուծման բնագավառում, չնայած ժամանակակից սերունդը քիչ է ծանոթ կամ հազվադեպ է դիմում նրա խորհրդին ու օգնությանը:

Գ. Տեր-Մկրտչյանի թողած բանասիրական ժառանգության համակողմանի հետազոտության ու հրատարակության գործը, որը սկսվեց 70-ական թթ. Երևանի պետ. համալսարանի հայագիտական կենտրոնի նախաձեռնությամբ, հայտնի պատճառներով դադարել է այսօր, իսկ մեր առիթից առիթ կատարած անդրադարձումներն ու հրապարակումները շատ բան չեն ավելացնում եղածին:

Չնայած մեզանում ավանդույթ չի դարձել գիտության նվիրյալների հիշատակի ոգեկոչումը, բայց Գ. Տեր-Մկրտչյանի անձն ու վաստակը արժանի են նման վերաբերմունքի, որ մեծապես խթանում է հայ դասական բանասիրության ավանդների վերածննդին ու զարգացմանը: Ինչպես ժամանակին հայագետ Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանն է գրել, Գ. Տեր-Մկրտչյանն իսկապես «պատիվ է բերել յուր ծառայած հիմնարկությանը և յուր ցեղին բազմաթիվ եվրոպացի ճանապարհորդների և մասնագետների առաջ... յուր մտավոր աշխատություններով մնայուն գործեր թողել հայագիտության ասպարեզում... յուր խորհուրդներով և յուր հմտությունով միշտ օգտակար է հանդիսացել էջմիածնի վանքին, երբ խորհրդի և առողջ մտքի կարիք է զգացվել» («Արարատ», 1919, № 1—12, էջ 40—41):

ՊԻՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ

